ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

(ուսումնական առարկայի անվանումը)

Մասնագիտություն/ուղղություն Հոգեբանություն, 031031.01.6

Որակավորումը Բակալավր

Ֆակուլտետ Հասարակական գիտությունների

Ուսուցման ձև հեռակա 4-րդ կուրս

Վանաձոր

2023 թ.

ԾՐԱԳԻՐ

1.Պրակտիկայի նպատակը

Մասնագիտական աշխատանքում անհրաժեշտ հոգեբանական կարողությունների, հմտությունների, մասնագիտական կոմպետենցիաների ձևավորումն և զարգացումն է, որոնց հիմքն են հադիսանում «Ընդհանուր հոգեբանություն», «Տարիքային և մանկավարժական հոգեբանություն», «Սոցիալական հոգեբանություն», «Հոգեախտորոշում» դասընթացների ուսումնասիրության արդյունքում ձեռք բերված գիտելիքները:

1.1 Ուսանողին հստակ պատկերացում տալ այն հոգեբանական հմտությունների կիրառման մասին, որոնք գործածվում են մանկավարժական գործընթացում:

1.2 Ծանոթացնել երեխաների հետ աշխատանքի հոգեբանական առանձնահատկություններին:

1.3 Ծանոթացնել դասարանային խմբերի հետ աշխատանքների սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններին:

1.4 Ուսանողներին ծանոթացնել հոգեբանական գիտելիքների կիրառման առանձնահատկություններին:

2. Պրակտիկայի խնդիրները

2.1. Նպաստել ուսանողների հոգեբանական մակարդակի բարձրացմանը:

2.2. Նպատակային և արդյունավետ դարձնել ուսանողների աշխատանքը հասարակական զարգացման օրինաչափությունների զարգացման գործում:

2.3. Ուսանողներին հաղորդակից դարձնել գիտության, մշակույթի նվաճումներին, օգնել ճիշտ կողմնորոշվելու հասարակական կյանքի գիտական ղեկավարման տեսության և պրակտիկայի հարցերում:

2.4. Ուսանողների՝ ապագա մասնագետների մոտ մշակել արտադրության ղեկավարման, աշխատանքային և դասարանային կոլեկտիվի կազմակերպիչի և դաստիարակողի ունակություններ և հմտություններ:

3. Պրակտիկայի հաստատության վայրը

Պրակտիկան անց է կացվում դպրոցում՝ հետևյալ բովանդակությամբ.

3.1.Ուսանողը պրակտիկայի առաջին օրերին ծանոթանում է դպրոցի հետ, նրա տնօրենի, ուսուցիչների և բազմամասնագիտական թիմ անդամների հետ: Ուսումնասիրում է այն դասարանը, որտեղ ուսանողը անցնելու է իր արտադրական պրակտիկան, ծանոթանում է ուսուցիչների և դասղեկի աշխատանքի հետ: Ուսումնասիրում է դասարանային խմբի հոգեբանական առանձնահատկությունները և կազմում դասարանային խմբի հոգեբանական

բնութագիր: Ընթացքում վարում է նաև անհատական և խմբային դաստիարակչական աշխատանքներ: Մասնակցում է պրակտիկայի ընթացքում անցկացվող համադպրոցական միջոցառումներին:

Հոգեբանի կողմից հանձնարարվում է նաև աշակերտի՝ որպես դասարանային խմբի անդամի հոգեբանական բնութագիրը, որտեղ մանրամասնորեն ներկայացվում են տեղեկություններ աշակերտի մասին, ընտանեկան դաստիարակության պայմանները, տվյալ դասարանային կոլեկտիվի բնութագիրը, աշակերտի վերաբերմունքը կոլեկտիվի նկատմամբ, անձնավորության ուղղվածությունը, հավակնությունների մակարդակը, աշակերտի գործունեությունը տարբեր ոլորտներում, ճանաչողական գործունեության բնութագիրը, հուզակամային ոլորտի առանձնահատկությունները, խառնվածքը, բնավորությունը: Ներկայացվում է նաև ուսանող-պրակտիկանտի կողմից կոլեկտիվի, նաև անհատական ներգործման միջոցով սովորողների դաստիարակության գործում կատարված աշխատանքը և նրանց արդյունավետությունը: Եվ վերջում տրվում են հոգեբանամանկավարժական եզրակացություններ, որտեղ նշվում են դաստիարակչական աշխատանքում ուղղումներ մտցնելու հնարավոր ուղիները:

4. Պրակտիկայի ընթացակարգը

	Բովանդակություն
<u>**Շաբաթ 1**</u>	*Ծանոթություն դպրոցին, դասարանին, ուսուցչական կոլելտիվին: Կատարել դասալսումներ համապատասխան դասարաններում:*
<u>**Շաբաթ 2**</u>	*Նախապատրաստվել հոգեբանական-խորհրդատվական աշխատանքներին, կազմակերպել զարգաղնող խաղեր և երեխաների զարգացմանն ուղղված միջոցառումներ, լսել և մասնակցել համակուրսեցիների վարած միջոցառումներին, որոնց ավարտից հետո կատարել հոգեբանական վերլուծություն:*
<u>**Շաբաթ 3**</u>	*Կատարել հոգեբանական հետազոտություն, կիրառել տարատեսակ մեթոդիկաներ և թեստեր կազմել հետազոտվողի հոգեբանական բնութագիրը:*
<u>**Շաբաթ 4**</u>	*Կատարել իրականացված աշխատանքների ամփոփում, լրացրած օրագրերի, անհատական բնութագրերի վերլուծություն, քննարկում:*

` **5. Պրակտիկայի ղեկավարների (այդ թվում պրակտիկայի անցկացման վայրի աշխատակից ղեկավարի) պարտականությունները, գործառույթների նկարագրությունը**

Հոգեբանության դասախոսը՝

- օգնում է պրակտիկանտին անհատական պլանը կազմելիս,
- օգնում է պրակտիկանտներին՝ կազմելու աշակերտի (դասարանի) հոգեբանական բնութագիրը,
- կատարում է վարած դասերի հոգեբանամանկավարժական վերլուծություն,
- մասնակցում է ուսանողների պրակտիկայի գնահատմանը:

Պրակտիկանտի պարտականություններն ու իրավունքները

- պարտավոր է դպրոցում աշխատել 6 ժամ՝ իր աշխատանքային պլանի համաձայն,
- պահպանել հաստատության աշխատանքային կարգապահությունը,
- մշակել պրակտիկայի անհատական պլանը պրակտիկայի ղեկավարների օգնությամբ,
- աշխատել համաձայն հաստատված պլանի, ժամանակին ներկայացնել հաշվետվություն,
- ծանոթանալ հաստատության հոգեբանամանկավարժական գործընթացի պլանավորման, կազմակերպման և ղեկավարման աշխատանքներին,
- ուսումնասիրել մեկ աշակերտի տարիքային և անհատական առանձնահատկությունները՝ կիրառելով համապատասխան մեթոդիկաներ և մեթոդներ
- կատարել արդյունքների հոգեբանական վերլուծություն և կազմել աշակերտի անհատական հոգեբանական բնութագիր:
- իրավունք ունի ինքնուրույն ընտրել ուսումնասիրության օբյեկտը,
- իրավունք ունի ինքնուրույն ընտրել ուսումնասիրության մեթոդները և մեթոդիկաները:

5.Պրակտիկայի հաշվետու փաստաթուղթը

5.1. Պրակտիկայի օրագիր:

5.2 Աշակերտի՝ որպես կոլեկտիվի անդամի անհատական հոգեբանական բնութագիրը:

5.3 Դասարանային խմբի հոգեբանական բնութագիրը:

6. Պրակտիկայի գնահատումը

Գնահատման բաղադրիչները	*Հատկացվող*	*Գնահատում*

	միավորը	
1. Հաճախելիություն	0 - 10	
2. Մասնագիտական իմացություն	0 - 20	
3 Կիրառած գործիքակազմ • Մեթոդական գործիքակազմի ընտրության և կիրառման կարողություն • Հոգեբանական մեթոդիկաների տիրապետում	 0 - 10 0 - 10	
4. Հոգեբանախորհրդատվական աշխատանք • հոգեբանական հետազոտություն կատարելու, հոգեբանական բնութագրի կազմման կարողություն • սեմինարների, հոգեշտկողական աշխատանքների կազմակերպման կարողություն • հետազոտության արդյունքների վերլուծության և մեկնաբանման կարողություն	 0 - 10 0 - 10 0 - 10	
Պաշտպանություն	0 - 20	
Ընդհանուր միավորը	100	

Կոմպետենցիաների ցանկ,

որոնք «Հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանության բակալավրի որակավորում ունեցող ուսանողը ձեռք կբերի արտադրական պրակտիկայի արդյունքում՝ սահմանված 031301.1.06 «Հոգեբանություն» ԿԾ-ով

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

Ա2. Վերարտադրել հոգեբանության մեթոդաբանությունը:

Ա5. Տարբերակել հոգեկանի և վարքի նորման, շեղումները և պաթոլոգիան:

Ա6. Նկարագրել հոգեբանական օգնության մակարդակները, բացատրել դրանց կազմա-կերպման առանձնահատկությունները, թվարկել մեթոդները:

Ա7. Ներկայացնել հոգեբանի գործունեության էթիկական նորմերը, գործունեության տարբեր ոլորտներում ներկայացվող պահանջները

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ

Բ2. Կիրառելու տեսական գիտելիքները և հետազոտական հմտությունները մասնագիտական գործունեության սահմաններում և առօրյայում

Բ4. Մշակելու և կիրառելու զարգացնող և շտկողական աշխատանքների հնարներ և մեթոդներ

Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

Գ4. Ցուցաբերել տոլերանտություն և համագործակցելու կարողություն:

Հետազոտության մեթոդիկաների օրինակելի ցանկ:

2. Ռ. Ժիլի "ընտանեկան միջանձնային հարաբերությունների հետազոտություն" թեստ, Սոցիոմետրիա,

3. Test "Ընտանիքի նկարը",

4. Լյուշերի թեստ

5.Ռ. Քեթելի անձնական հարցաշարը,

6. անձի ինքնագնահատականի սանդղակ,

7. .Նվաճելու պահանջմունքի կարիքի ուսումնասիրության մեթոդիկա,

8. Անձի ուղղվածության որոշում (Բ. Բասսի կողմնորոշիչ Հարցաթերթիկ),

9. "ընտանեկան փոխհարաբերությունների վերլուծություն"մեթոդիկա,

10.Ստոտտի դիտարկման քարտեզ

11. սթրես-վարքային վարքի ախտորոշման մեթոդիկա (քոփինգ-վարքագիծ սթրեսային իրավիճակներում),

12.սոցիալ-հոգեբանական հարմարվողականության սանդղակ (Կ. Ռոջերս, Ռ. Դայմոնդ) և այլն: